ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2021թ. թիվ 103-Ա

ՆԱԻՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի 17.02.2021թ. թիվ 1 արձանագրության 1-ին կետը և 2020թ. դեկտեմբերի 4-5-ը «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ. Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված ներքին աուդիտորական հաշվետվությունը, հաշվի առնելով Ն. Հարությունյանի 21.02.2021թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 610 հոդվածի 2-րդ կետի պահանջը խախտելու համար՝ ՊՈԱԿ-ի և «Վան-Բուլանժե» ՍՊԸ-ի միջև 2017-2019 թվականների ընթացքում կնքված տարածքի վարձակալության պայմանագիրը նոտարական կարգով չվավերացնելու, 2018 թվականի փետրվարի 1-ին աշխատանքից ազատված աշխատակցի հաստիքը նույն թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատված տարիֆիկացիոն ցուցակում չընդգրկելու, ինչպես նաև վերը նշված ներքին աուդիտորական հաշվետվությունում արձանագրված այլ խախտումների համար «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ.Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Նաիրա Հարությունյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ. Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ն. Հարությունյանին՝

Աուդիտորական հաշվետվության գործողությունների ծրագրին համապատասխան վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարողին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2/23/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք.Վանաձոր